**Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների մատուցման**

# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԱՍՀՆ-ԲԸԱՀ-17/1

ք. Երևան «07» «02» 2017 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամը, ի դեմս Հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Աբրահամյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է 30 աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարողը համաձայնում է պայմանագիրը կատարել կարճ ժամկետում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 **2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ Ակտի ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 3 օրինակ (Հավելված N 4), և կազմվում է Ակտ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ (Հավելված N 4.1)

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 314044300 (երեք հարյուր տասնչորս միլիոն քառասունչորս հազար երեք հարյուր ) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝

սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 25-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով,իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից, տարածվում է նաև 2017 թվականի հունվարի 9-ից կողմերի միջև ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված հինգ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N1, N2, N3, N4 և N4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն-3
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հ/Հ 900011262020
ՀՎՀՀ 01506515
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝

Ա. Գրիգորյան

Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
ք. Երևան, Կ.Ուլնեցու - 68
Բանկի անվանումը՝ Հայէկոնոմբանկ ՓԲԸ Զեյթուն մասնաճյուղ
Հ/Հ 16351801254 3
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն Մ. Աբրահամյան

Կ. Տ.

Հավելված N 1
<< 07 >> 02 2017թ. կնքված
N ԱՍՀՆ-ԲԸԱՀ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի 10 բաժնի 09 խմբի 02 դասի «14.Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրով նախատեսված ծառայությունների**

«Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագիրն իրականացվում է հետևյալ չորս բաղկացուցիչ մասերով.

I. Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի վարում, սպասարկում, արդիականացում, տվյալների տրամադրում:

II. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱՍՀՆ) և նրա կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, ՀՀ ԱՍՀՆ կառավարման ոլորտում գործող պետական մարմնի (այսուհետ՝ ՍԱՊԾ) և նրա տարածքային բաժինների, ՀՀ մարզպետարանների, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների ՄԾՏՄ-ների համակարգչային տեխնիկայի սպասարկում և վերանորոգման ծառայությունների մատուցում:

III. ՀՀ ԱՍՀՆ և նրա կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, ՍԱՊԾ և նրա տարածքային բաժինների, ՀՀ մարզպետարանների, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների ՄԾՏՄ-ների միջև լոկալ և գլոբալ ցանցի սպասարկում, սերվերային համալիրի և առանձնացված սերվերների սպասարկում:

IV. ՀՀ ԱՍՀՆ և նրա կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, ՍԱՊԾ և նրա տարածքային բաժինների, ՀՀ մարզպետարանների, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների ՄԾՏՄ-ների ինտերնետ հասանելիության ապահովում և սոցիալական պաշտպանության ոլորտում գործող վեբկայքերի սպասարկում:

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

### I. Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի վարում, սպասարկում, արդիականացում, տվյալների տրամադրում

Ծառայություններ մատուցող կազմակերպությունը սույն տեխնիկական բնութագրի I բաղկացուցիչ մասով նախատեսված աշխատանքների շրջանակներում պետք է վարի, սպասարկի և շահագործի սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգը, որը բաղկացած է ստորև ներկայացված ենթահամակարգերից.

1. Տեղեկատվության փոխանակության ենթահամակարգ:
2. Հաշմանդամների հաշվառման «Փյունիկ» տեղեկատվական ենթահամակարգ:

3. ՀՀ զբաղվածության ոլորտի գործառույթներ իրականացնող «Գործ» տեղեկատվական ենթահամակարգ:

4. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգ:

5. Ընտանիքների անապահովության գնահատման «Նպաստ» տեղեկատվական ենթահամակարգ:

6. Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 10.06.1993թ. ներդրված դրամական ավանդների փոխհատուցման տեղեկատվական ենթահամակարգ:

7. Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական ենթահամակարգ:

8. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների միասնական ընդունարանների դիմումների հաշվառման տեղեկատվական ենթահամակարգ:

9. Սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգ:

10. Սոցիալական բանկ տեղեկատվական ենթահամակարգ:

11. Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված և խնամք ստացող տարեցների ու հաշմանդամների հաշվառման տեղեկատվական ենթահամակարգ:

12. Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական ենթահամակարգ:

13. Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանների, բնակելի տարածության կարիք ունեցող անձանց տվյալների հաշվառման և համապատասխան հերթացուցակի ձևավորման տեղեկատվական ենթահամակարգ:

14. ՀՀ ԱՍՀՆ իրավական ակտերի տեղեկատվական ենթահամակարգ:

**1. Տեղեկատվության փոխանակության ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

1.1. Պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից վարվող տեղեկատվական համակարգերում առկա՝ սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերում կիրառման համար անհրաժեշտ տվյալների ստացում ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, այդ թվում՝

- Բնակչության պետական ռեգիստրից՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի N 713-Ն որոշմամբ սահմանված կարգով,
- ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայությունից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
- ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
- ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
- ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,
- «Հայկական էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով,

- ՀՀ կառավարության առընթեր Պետական եկամուտների կոմիտեից՝ ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ սահմանված կարգով:
- ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունից:

1.2. Ինքնաշխատ եղանակով տեղեկատվության փոխանակությունն ապահովող ծրագրային գործիքների (մոդուլների) սպասարկում:

1.3. Պետական կառավարման մարմիններից և այլ կազմակերպություններից ստացված 1.1 կետում նշված տվյալների մշակում և համապատասխանեցում անհրաժեշտ ձևաչափերին՝ սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգում կիրառելու նպատակով:

1.4. Պետական կառավարման մարմիններից և այլ կազմակերպություններից ստացված տեղեկատվության համադրում սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական ենթահամակարգերում առկա տվյալների հետ, այդ թվում՝

1.4.1. Սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգում հաշվառված ֆիզիկական անձանց նույնականացում, ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տվյալների համադրում սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերում հաշվառված ֆիզիկական անձանց տվյալների հետ՝ անձնագրային տվյալներում առկա անճշտությունների հայտնաբերման նպատակով:

1.4.2. ՔԿԱԳ մարմիններից ստացված՝ անձանց մահվան վերաբերյալ տեղեկատվության համադրում սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերում հաշվառված անձանց տվյալների հետ, անձանց մահվան վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում համապատասխան շտեմարաններ,

1.4.3. Անձնավորված հաշվառման տեղեկատվական համակարգի, ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի և Էլեկտրոնային կենսաթոշակների համակարգի տվյալների համադրում ՀՀ զբաղվածության ոլորտի գործառույթներ իրականացնող «Գործ», ընտանիքների անապահովության գնահատման «Նպաստ» տեղեկատվական ենթահամակարգերի (անհրաժեշտության դեպքում, նաև այլ ենթահամակարգերի) տվյալների հետ՝ անճշտությունների հայտնաբերման նպատակով:

1.5. ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, ըստ անհրաժեշտության, տեղեկատվության տրամադրում պետական կառավարման մարմիններին և այլ կազմակերպություններին:

1.6. Պարբերաբար և ըստ անհրաժեշտության վիճակագրական հաշվետվությունների ձևավորում և տրամադրում:

1.7. Պարբերաբար և ըստ անհրաժեշտության տարատեսակ վերլուծությունների իրականացում, արդյունքների տրամադրում:

1.8. Տեղեկատվության համադրման ընթացակարգերի կատարելագործում, այդ թվում՝ տարբեր մարմիններից ստացվող տեղեկատվության կիրառման ընթացակարգերի ավտոմատացում:

**2. Հաշմանդամների հաշվառման «Փյունիկ» տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

2.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

2.2. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

2.3. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեսթավորում, թեսթավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

2.4. Ենթահամակարգում օգտագործվող տեղեկատու աղյուսակների պարբերաբար թարմացում և համալրում:

2.5. ՀՀ ԱՍՀՆ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (այսուհետ՝ ԲՍՓԳ) և նրա 27 հանձնաժողովների (այսուհետ՝ ԲՍՓՀ) կողմից մուտքագրված ընթացիկ տվյալների ստուգում, ստուգման արդյունքում հայտնաբերված բացթողումների և թերությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում ԲՍՓԳ՝ հետագա ճշգրտումներ իրականացնելու նպատակով:

2.6. Սահմանված ժամկետներում ենթահամակարգի տվյալների շտեմարանից տեղեկատվության տրամադրում ՍԱՊԾ:

2.7. Ենթահամակարգից տեղեկատվության նախապատրաստում անհրաժեշտ տվյալներով՝ ՀՀ ԱՍՀ նախարարի 22.08.2016թ. թիվ 90-Ա/1 հրամանի համաձայն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անձանց տվյալների հետ համադրման նպատակով:

2.8. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի մշակում, ձևավորում և տրամադրում ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչությանը և ԲՍՓԳ-ին:

2.9. Եռամսյա պարբերականությամբ ՀՀ ԱՍՀ նախարարի N 52 Ա/1 հրամանով հաստատված Ձև 1 և Ձև 2 հաշվետվությունների պահանջներին համապատասխան տեղեկատվության (ցուցակների) տրամադրում ԲՍՓԳ /ըստ 27 ԲՍՓՀ-ների/:

2.10. Սահմանված ժամկետներում վիճակագրական տարեկան Ձև 7 և կիսամյակային Ձև 1 հաշվետվությունների տրամադրում ՀՀ ԱՍՀՆ ԲՍՓԳ, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչությանը:

2.11. ԲՍՓՀ-ների նախորդ տարվա գործունեության տվյալների ամփոփ վերլուծության համար տեղեկատվության տրամադրում ԲՍՓԳ՝ ըստ քանակների և տեսակարար կշիռների:

2.12. Հարակից տեղեկատվական շտեմարանների հետ համադրման արդյունքների կիրառում (անձնագիր, նույնականացման քարտ, ՀԾՀ, մահվան ամսաթիվ) և տրամադրում ԲՍՓԳ՝ համապատասխան ճշտումներ կատարելու նպատակով:

2.13. Եռամսյակային պարբերականությամբ ժամկետանց գործերի վերաբերյալ տեղեկատվության (ցուցակների) տրամադրում ԲՍՓԳ /ըստ 27 ԲՍՓՀ-ների/:

2.14. Կիսամյակային տեղեկատվության /ըստ մարզերի, խմբերի և սեռի/ տրամադրում ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը:

2.15. Սահմանված ժամկետներում նախազորակոչային և զորակոչային տարիքի հաշմանդամ անձանց վերաբերյալ տեղեկատվության ստացում, ձևավորում և տրամադրում Զինվորական կոմիսարիատին:

2.16. ԲՍՓԳ և ԲՍՓՀ-ների աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում և հրահանգավորում՝ տեղեկատվական ենթահամակարգի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

2.17. Ենթահամակարգի շահագործման նպատակով նոր օգտվողներին իրավասության տրամադրում:

2.18. Ըստ անհրաժեշտության, ենթահամակարգի օգտվողների վերապատրաստում:

2.19. Ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների վերաբերյալ ուղեցույցների կազմում և տրամադրում ԲՍՓԳ և ԲՍՓՀ աշխատակիցներին:

2.20. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

**3. ՀՀ զբաղվածության ոլորտի գործառույթներ իրականացնող «Գործ» տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

3.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

3.2. Ենթահամակարգում օգտագործվող տեղեկատու աղյուսակների պարբերաբար թարմացում և համալրում:

3.3. Տվյալների ամսական համադրումների արդյունքների ձևավորում և տրամադրում զբաղվածության տարածքային կենտրոններին՝ ըստ փաստաթղթային հիմքերի շտկելու նպատակով:

3.4. Ենթահամակարգում հաշվառված անձանց անձնագրի տվյալների թարմացում:

3.5. Աշխատանք փնտրողների, այդ թվում՝ գործազուրկի կարգավիճակ ունեցող անձանց ցուցակների նախապատրաստում և նրանց տվյալների համադրում ՍԱՊԾ-ում գրանցված կենսաթոշակառուների, ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տեղեկատվական համակարգերում գրանցված անհատ ձեռներեցների տվյալների շտեմարանների հետ, արդյունքների տրամադրում ՀՀ ԱՍՀՆ Զբաղվածության պետական գործակալությանը (այսուհետ՝ ԶՊԳ):

3.6. «Գործ» տեղեկատվական համակարգում առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության ստացում և տրամադրում ԶՊԳ (քանակական տվյալներ) և ՀՀ ԱՍՀՆ (ցուցակներ)՝ համապատասխան ձևաչափերով:

3.7. Աշխատանք փնտրողների, այդ թվում՝ գործազուրկի կարգավիճակ ունեցող անձանց վերաբերյալ տեղեկատվության նախապատրաստում անհրաժեշտ տվյալներով՝ ՀՀ ԱՍՀ նախարարի 22.08.2016թ. թիվ 90-Ա/1 հրամանի համաձայն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անձանց տվյալների հետ համադրման նպատակով:

3.8. Զբաղվածության պետական ծրագրերի մոնիթորինգային ցուցանիշների ծրագրային ապահովում, դրանց համապատասխան տեղեկատվության ստացում և տրամադրում ԱՍՀՆ-ին:

3.9. Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկված անձանց ցուցակների նախապատրաստում և նրանց տվյալների համադրում ՍԱՊԾ անհատական հաշվառման «Պառնաս», ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի անձնավորված հաշվառման և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված անհատ ձեռնարկատերերի տվյալների տեղեկատվական շտեմարանների տվյալների հետ, արդյունքների տրամադրում ԶՊԳ-ին:

3.10. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

3.11. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեստավորում, թեստավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

3.12. Ծրագրային փոփոխությունների վերաբերյալ ուղեցույցների կազմում և տրամադրում ԶՊԳ-ին և ԶՏԿ-ներին:

3.13. Ենթահամակարգի շահագործման նպատակով նոր օգտվողներին իրավասության տրամադրում:

3.14. Ըստ ԶՊԳ պահանջի՝ ենթահամակարգում սխալ մուտքագրված տվյալների ճշգրտում:

3.15. Գործատուների ազատ մուտքագրման ենթահամակարգի վարում և անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում ԶՊԳ:

3.16. ԶՊԳ կառուցվածքային ստորաբաժանումների և տարածքային կենտրոնների աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում և հրահանգավորում՝ տեղեկատվական համակարգի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

3.17. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի մշակում, ձևավորում և տրամադրում ԶՊԳ և ՀՀ ԱՍՀՆ:

3.18. Ըստ անհրաժեշտության, ենթահամակարգի օգտվողների վերապատրաստում:

3.19. Պետական վիճակագրական հաշվետվությունների կազմում:

3.20. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

**4. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

4.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

4.2. Ենթահամակարգում օգտագործվող տեղեկատու աղյուսակների պարբերաբար թարմացում և համալրում:

4.3. Տեղեկատվական շտեմարանում կրկնակի հաշվառվածների, անճշտությունների (ծնողների կարգավիճակի, հայտնաբերման պահին երեխայի իրավիճակի, երեխայի գտնվելու վայրի վերաբերյալ) հայտնաբերում և տրամադրում ՀՀ ԱՍՀՆ, մարզային բաժիններին և երեխաների խնամք ու պաշտպանություն իրականացնող հաստատություններին՝ շտկումներ կատարելու նպատակով:

4.4. Տեղեկատվական շտեմարանի ամսական համադրում ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ, արդյունքների ձևավորում և տրամադրում մարզային բաժիններին և երեխաների խնամք ու պաշտպանություն իրականացնող հաստատություններին՝ ըստ փաստաթղթային հիմքերի շտկումներ կատարելու նպատակով:

4.5. ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ համադրման արդյունքում ՀԾՀ-ի և նույնականացման քարտի տվյալների թարմացում:

4.6. Ենթահամակարգի «Կդիգ երեխա» և «Որդեգրման ենթակա երեխա» ենթաբաժինների համադրման արդյունքում որդեգրված երեխաների տվյալների հայտնաբերում և «Կդիգ երեխա» ենթաբաժնից հաշվառումից հանում:

4.7. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

4.8. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեսթավորում, թեսթավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

4.9. Ըստ անհրաժեշտության, ենթահամակարգի օգտվողների վերապատրաստում, համապատասխան ուղեցույցների կազմում, տրամադրում և աջակցում համակարգի շահագործման գործընթացին:

4.10. Գիշերօթիկ խնամքի հաստատությունների, պետական մանկատների, ցերեկային կենտրոնների, ժամանակավոր կացարանների, ինչպես նաև «Առավոտ» և «Ակունք» հասարակական կազմակերպությունների կողմից մուտքագրված մոնիթորինգային ցուցանիշներին համապատասխան տվյալների ստուգում, անհրաժեշտության դեպքում հաստատությունների և Հ/Կ-ների մասնագետների հետ պարզաբանում, կիսամյակային և տարեկան հաշվետվությունների՝ ըստ հաստատությունների և ամփոփ ձևաչափերով, ստացում և տրամադրում ՀՀ ԱՍՀՆ:

4.11. Ենթահամակարգի շահագործման նպատակով նոր օգտվողներին իրավասության տրամադրում:

4.12. ՀՀ ԱՍՀՆ, մարզային բաժինների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների աշխատակիցներին, ինչպես նաև համայնքային ծառայողներին ու սոցիալական աշխատողներին խորհրդատվության տրամադրում և իրահանգավորում՝ ենթահամակարգի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

4.13. Ամենամսյա պարբերականությամբ համակարգում հաշվառված առանց ծնողական խնամքի մնացած՝ այդ թվում մանկատներում խնամվող և հաշվառումից /մանկատներից/ հանված երեխաների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում ՍԱՊԾ-ին:

4.14. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

4.15. Ենթահամակարգից անհրաժեշտ տվյալներով տեղեկատվության տրամադրում՝ ՀՀ ԱՍՀ նախարարի 22.08.2016թ. թիվ 90-Ա/1 հրամանի համաձայն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անձանց տվյալների հետ համադրման նպատակով:

4.16. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի կազմում և տրամադրում:

**5. Ընտանիքների անապահովության գնահատման «Նպաստ» տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

5.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում և համապատասխանեցում ՀՀ կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով նախատեսված դրույթներին:

5.2. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

5.3. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեսթավորում, թեսթավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

5.4. Փաստագրված ընտանիքների տվյալների մշակում՝

- Սոցիալական աջակցություն տրամադրող տարածքային մարմիններից (այսուհետ՝ ՍԱՏՏՄ) տեղեկատվության ամենամսյա հավաքագրում /էլեկտրոնային կապի միջոցով/ և մշակում:
- Ամենամսյա ընտանեկան, սոցիալական նպաստի և միանվագ դրամական օգնության վճարումների ցուցակների նախապատրաստում և տպագրություն:
- Ամենամսյա եռամսյակային դրամական օգնության վճարումների ցուցակների նախապատրաստում և տպագրություն:

5.5. Ըստ անհրաժեշտության, ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի համադրում այլ տեղեկատվական շտեմարանների հետ, համադրման արդյունքների տրամադրում ՀՀ ԱՍՀՆ:

5.6. Ենթահամակարգի տվյալների շտեմարանի թարմացում՝ ՍԱՏՏՄ-ներից ստացված տվյալների հիման վրա, կրկնակի հաշվառվածների հայտնաբերում և նպաստի վճարման իրավունքի կասեցում տեղեկատվական շտեմարանում:

5.7. Ամենամսյա վճարումների հայտերի, հաշվետվությունների պատրաստում, վճարման ռեեստրների ընդունում և հաշվառում:

5.8. Ամենամսյա տեղեկատվական շտեմարանի տրամադրում ՀՀ ԱՍՀՆ-ին:

5.9. Ամենամսյա էլեկտրոնային ցուցակների տրամադրում «Հայփոստ» ՓԲԸ-ին:

5.10. Ամենամսյա էլեկտրոնային տեղեկատվության տրամադրում ՀՀ ՍԱՊԾ-ին:

5.11. Խորհրդատվության և օժանդակության տրամադրում ՍԱՏՏՄ-ների աշխատակիցներին:

5.12. Ամենամսյա էլեկտրոնային ցուցակների տրամադրում ՀՀ մարզպետարաններին և քաղաքային բնակավայրեր սպասարկող թվով 5 քաղաքապետարաններին:

5.13. Ամենամսյա էլեկտրոնային ցուցակների տեղակայում ՀՀ ԱՍՀՆ կայքում:

5.14. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

5.15. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի կազմում և տրամադրում համապատասխան մարմիններին:

**6. Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 10.06.1993թ. ներդրված դրամական ավանդների փոխհատուցման տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

6.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում և համապատասխանեցում ՀՀ կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով նախատեսված դրույթներին:

6.2. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

6.3. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեստավորում, թեստավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

6.4. ՍԱՏՏՄ-ներից տեղեկատվության ամենամսյա հավաքագրում և մշակում:

6.5. Ամսական պարբերականությամբ ենթահամակարգի և ՀՀ բնակչության պետական ռեգիստրի (այդ թվում՝ հանրային ծառայությունների համարանիշերի), ՔԿԱԳ մահացած անձանց տեղեկատվական շտեմարանների համադրում, արդյունքների կիրառում սահմանված ընթացակարգով և տրամադրում ՍԱՏՏՄ-ներին՝ շտեմարաններում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով:

6.6. Վճարման հայտերի, հաշվետվությունների պատրաստում, ռեեստրների ընդունում և հաշվառում:

6.7. Ավանդի փոխհատուցման վճարումների ցուցակների նախապատրաստում և տպագրություն:

6.8. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

6.9. Խորհրդատվության և օժանդակության տրամադրում ՍԱՏՏՄ-ների աշխատակիցներին:

6.10. Ամենամսյա տեղեկատվական շտեմարանի տրամադրում ՀՀ ԱՍՀՆ-ին:

6.11. Ամենամսյա էլեկտրոնային ցուցակների տրամադրում «Հայփոստ» ՓԲԸ-ին:

6.12. Ամսական պարբերականությամբ ավանդի փոխհատուցման տվյալների արդիականացում ՀՀ ԱՍՀՆ պաշտոնական վեբկայքում:

6.13. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի կազմում և տրամադրում:

**7. Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

7.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

7.2. ՀՀ ԱՍՀՆ ենթակայությամբ գործող ՊՈԱԿ-ների, ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության և, ըստ անհրաժեշտության, այլ ստորաբաժանումների աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում և հրահանգավորում՝ տեղեկատվական համակարգի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

7.3. Ենթահամակարգի նոր օգտվողների վերապատրաստում, համապատասխան ուղեցույց-ձեռնարկների տրամադրում և աջակցություն համակարգի շահագործման գործընթացին:

7.4. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

7.5. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեսթավորում, թեսթավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

7.6. Ենթահամակարգում օգտագործվող տեղեկատու բառարանների պարբերաբար թարմացում և համալրում:

7.7. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

**8. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների միասնական ընդունարանների դիմումների հաշվառման տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

8.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

8.2. Ենթահամակարգի տեղեկատու աղյուսակների պարբերաբար թարմացում և համալրում:

8.3. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

8.4. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեսթավորում, թեսթավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

8.5. Ենթահամակարգում հաշվառված դիմումներում առկա սխալների շտկում՝ դիմում ընդունող կազմակերպություններից ստացված հայտերի հիման վրա:

8.6. Վիճակագրական հաշվետվությունների ստացում և տրամադրում ՀՀ ԱՍՀՆ:

8.7. Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (այսուհետ՝ ՀՍԾՏԿ) աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում և հրահանգավորում:

8.8. Ենթահամակարգի ներդրում նոր ձևավորվող ՀՍԾՏԿ-ներում, այդ թվում՝ աշխատակիցների վերապատրաստում, համապատասխան ուղեցույց-ձեռնարկների տրամադրում և աջակցություն համակարգի շահագործման գործընթացին:

8.9. Ենթահամակարգի և սոցիալական պաշտպանության ոլորտի այլ տեղեկատվական ենթահամակարգերի միջև տեղեկատվության ավտոմատ փոխանակության ընթացակարգերի կատարելագործում՝ համապատասխան ծրագրային փոփոխությունների կատարման միջոցով:

8.10. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

8.11. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի կազմում և տրամադրում:

**9. Սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

9.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

9.2. Ենթահամակարգի արդիականացման շրջանակներում պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

9.3. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեսթավորում, թեսթավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

9.4. Վիճակագրական հաշվետվությունների ստացում և տրամադրում ՀՀ ԱՍՀՆ:

9.5. ՀՍԾՏԿ աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում և հրահանգավորում:

9.6. Ենթահամակարգի ներդրում նոր ձևավորվող ՀՍԾՏԿ-ներում, այդ թվում՝ աշխատակիցների վերապատրաստում, համապատասխան ուղեցույց-ձեռնարկների տրամադրում և աջակցություն համակարգի շահագործման գործընթացին:

9.7. Ենթահամակարգի և սոցիալական պաշտպանության ոլորտի այլ տեղեկատվական ենթահամակարգերի միջև տեղեկատվության ավտոմատ փոխանակության ընթացակարգերի կատարելագործում՝ համապատասխան ծրագրային փոփոխությունների կատարման միջոցով:

9.8. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

9.9. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի կազմում և տրամադրում:

**10. Սոցիալական բանկ տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

10.1. Սոցիալական բանկում առկա տեղեկատվության (ինչպես սոցիալական պաշտպանության ոլորտի, այնպես էլ հարակից) թարմացումների իրականացում՝ համաձայն ՀՀ ԱՍՀ նախարարի՝ 27.09.2016թ. N 98-Ա/1 հրամանով սահմանված կարգի:

10.2. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

10.3. Ենթահամակարգի արդիականացման շրջանակներում պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

10.4. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեսթավորում, թեսթավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

10.5. ՍԱՏՏՄ աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում և հրահանգավորում՝ տեղեկատվական ենթահամակարգի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

10.6. Ենթահամակարգի շահագործման նպատակով նոր օգտվողներին իրավասության տրամադրում:

10.7. Ըստ անհրաժեշտության, ենթահամակարգի օգտվողների վերապատրաստում:

10.8. Ըստ անհրաժեշտության, հաշվետվային ձևատեսակների մշակում և տեղակայում ենթահամակարգում:

10.9. Ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների վերաբերյալ ուղեցույցների կազմում և տրամադրում ՍԱՏՏՄ աշխատակիցներին:

10.10. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

**11. Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված և խնամք ստացող տարեցների ու հաշմանդամների հաշվառման տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

11.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում, թեսթավորում:

11.2. ՀՀ ԱՍՀՆ ենթակայությամբ գործող տուն-ինտերնատների, տնային պայմաններում միայնակ տարեցների սպասարկման ցերեկային կենտրոնի, ՀՀ ԱՍՀՆ հետ պայմանագիր կնքած՝ տարեցների, հաշմանդամների և անօթևանների խնամք իրականացնող բարեգործական հիմնադրամների ու հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության և, ըստ անհրաժեշտության, այլ ստորաբաժանումների աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում և հրահանգավորում՝ տեղեկատվական համակարգի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

11.3. Ըստ անհրաժեշտության, ենթահամակարգի օգտվողների վերապատրաստում, համապատասխան ուղեցույց-ձեռնարկների տրամադրում և աջակցություն համակարգի շահագործման գործընթացին:

11.4. Ենթահամակարգի շահագործման նպատակով նոր օգտվողներին իրավասության տրամադրում:

11.5. Ըստ անհրաժեշտության, նոր հաշվետվային ձևատեսակների մշակում և տեղակայում ենթահամակարգում:

11.6. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

11.7. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեսթավորում, թեսթավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

11.8. Բնակչության սոցիալական կազմակերպություններում գտնվող (գտնված) անձանց վերաբերյալ տեղեկատվության ձևավորում և տրամադրում ՍԱՊԾ-ին:

11.9. Ենթահամակարգի և սոցիալական պաշտպանության ոլորտի այլ տեղեկատվական համակարգերի միջև (մասնավորապես, էլեկտրոնային կենսաթոշակ) տեղեկատվության ավտոմատ փոխանակության ընթացակարգերի կատարելագործում:

11.10. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի մշակում, ձևավորում և տրամադրում ՀՀ ԱՍՀՆ:

11.11. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

**12. Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

12.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

12.2. ՀՀ ԱՍՀՆ հետ պայմանագիր կնքած պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ տրամադրող կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության և, ըստ անհրաժեշտության, այլ ստորաբաժանումների աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում և իրահանգավորում՝ տեղեկատվական համակարգի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

12.3. Ըստ անհրաժեշտության, ենթահամակարգի նոր օգտվողների վերապատրաստում, համապատասխան ուղեցույց-ձեռնարկների տրամադրում և աջակցություն համակարգի շահագործման գործընթացին:

12.4. Ենթահամակարգի շահագործման նպատակով նոր օգտվողներին իրավասության տրամադրում:

12.5. Ենթահամակարգի տեղեկատու աղյուսակների պարբերաբար թարմացում և համալրում:

12.6. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

12.7. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեսթավորում, թեսթավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

12.8. ՀՀ ԱՍՀՆ պահանջով, ենթահամակարգի և այլ տեղեկատվական շտեմարանների (մասնավորապես, բնակչության պետական ռեգիստր, հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգ) տվյալների համադրում, արդյունքների տրամադրում:

12.9. ՀՀ ԱՍՀՆ-ից և «Հանգրվան» ՊՈԱԿ-ից սահմանված ձևաչափով ստացված՝ ենթահամակարգ չմուտքագրված տվյալների համադրում ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տվյալների հետ, նույնականացված անձանց տվյալների մուտքագրում:

12.10. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի մշակում, ձևավորում և տրամադրում ՀՀ ԱՍՀՆ:

12.11. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

**13. Սոցիալական բնակարանային ֆոնդի կացարանների, բնակելի տարածության կարիք ունեցող անձանց տվյալների հաշվառման և համապատասխան հերթացուցակի ձևավորման տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

13.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

13.2. Ենթահամակարգի նոր օգտվողների վերապատրաստում, համապատասխան ուղեցույց-ձեռնարկների տրամադրում և աջակցություն համակարգի շահագործման գործընթացին:

13.3. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

13.4. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեսթավորում, թեսթավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

13.5. Ենթահամակարգի տեղեկատու աղյուսակների պարբերաբար թարմացում և համալրում:

13.6. Սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների աշխատակիցներին խորհրդատվության տրամադրում և իրահանգավորում՝ տեղեկատվական համակարգի շահագործման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

13.7. Ըստ անհրաժեշտության, տեղեկատվական և վերլուծական նյութերի մշակում, ձևավորում և տրամադրում ՀՀ ԱՍՀՆ:

13.8. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

**14. ՀՀ ԱՍՀՆ իրավական ակտերի տեղեկատվական ենթահամակարգի վարման և սպասարկման ծառայություններ**

14.1. Ենթահամակարգի ծրագրային սպասարկում, ուղեկցում, ըստ անհրաժեշտության, ծրագրային փոփոխությունների իրականացում:

14.2. Ենթահամակարգի նոր օգտվողների վերապատրաստում, համապատասխան ուղեցույց-ձեռնարկների տրամադրում և աջակցություն համակարգի շահագործման գործընթացին:

14.3. Պատվիրատուի կողմից ներկայացված խնդրի նկարագրերի հիման վրա անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի մշակում:

14.4. Իրականացված ծրագրային փոփոխությունների թեսթավորում, թեսթավորման արդյունքների ամփոփում և հնարավոր լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

14.5. Ենթահամակարգի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:

**II. ՀՀ ԱՍՀՆ և նրա կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, ՍԱՊԾ և նրա տարածքային բաժինների, ՀՀ մարզպետարանների, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների ՄԾՏՄ-ների համակարգչային տեխնիկայի սպասարկում և վերանորոգման ծառայությունների մատուցում**

Ծառայություններ մատուցող կազմակերպությունը սույն տեխնիկական բնութագրի II բաղկացուցիչ մասով նախատեսված աշխատանքների շրջանակներում պետք է իրականացնի ՀՀ ԱՍՀՆ և նրա կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, ՍԱՊԾ և նրա

տարածքային բաժինների, ՀՀ մարզպետարանների, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների ՄՍՏՄ-ների, «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի, ինչպես նաև «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի համակարգիչների և այլ տեխնիկական միջոցների (ընդհանուր առմամբ, շուրջ 6880 (համակարգիչների և այլ տեխնիկական միջոցներ) սպասարկման ու վերանորոգման ծառայությունները, մասնավորապես՝

**ա) ՀՀ ԱՍՀ նախարարի աշխատակազմ և ՀՀ ԱՍՀՆ կառուցվածքային ստորաբաժանումներ**՝ շուրջ 1075 համակարգիչներ և այլ տեխնիկական միջոցներ (մոնիտոր, տպիչ սարք, անխափան սնուցման սարք, սկաներ, պատճենահանող սարք, ֆաքս, ցանցային սարքեր և սերվերներ):

**բ) ՄՍՏՄ-ներ և ՀՄՍՏԿ-ներ**՝ շուրջ 1200 համակարգիչներ և այլ տեխնիկական միջոցներ:

**գ) ԲՍՓԳ և ԲՍՓՀ-ներ**՝ շուրջ 296 համակարգիչներ և այլ տեխնիկական միջոցներ:

**դ) ՍԱՊԾ և տարածքային բաժիններ**՝ շուրջ 2755 համակարգիչներ և այլ տեխնիկական միջոցներ:

**ե) ԶՊԳ և տարածքային կենտրոններ**՝ շուրջ 1315 համակարգիչներ և այլ տեխնիկական միջոցներ:

**զ) «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ**՝ շուրջ 180 համակարգիչներ և այլ տեխնիկական միջոցներ:

**է) «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ**՝ շուրջ 59 համակարգիչներ և այլ տեխնիկական միջոցներ:

Համակարգիչների և այլ տեխնիկական միջոցների սպասարկման ու վերանորոգման ծառայություններն իրենց մեջ ներառում են հետևյալ աշխատանքները.

**1. Ցանցային սարքավորումների վերանորոգում (ըստ անհրաժեշտության)՝**

- Համակարգչային ցանցի պասիվ և ակտիվ սարքավորումների վերանորոգում:
- Կապուղիների ախտորոշում, փոխարինում:

**2. Տպող և պատճենահանող սարքավորումների քարթրիջների լիցքավորում և արագամաշ դետալների (թմբուկ, ջերմաթաղանթ և այլն) փոխարինում, այդ թվում՝**

- Տպող և պատճենահանող սարքերի քարթրիջների վերալիցքավորում (եթե դա նախատեսված է սարքավորման տեխնիկական անձնագրով) կամ փոխարինում:
- Տպող և պատճենահանող սարքերի արագամաշ դետալների (թմբուկ, ջերմաթաղանթ և այլն) փոխարինում:

Տպող և պատճենահանող սարքերի քարթրիջների վերալիցքավորումը կամ փոխարինումը, դրանց արագամաշ դետալների փոխարինումն իրականացվում է սպասարկման հայտը ներկայացնելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

**3. Համակարգչային սարքավորումների (այդ թվում՝ սերվերային) անսարքությունների ախտորոշում և վերանորոգում, այդ թվում՝**

- Համակարգչային սարքավորումների անսարքությունների ախտորոշում՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:
- Ախտորոշումից հետո անսարքությունների և վերանորոգման ժամկետի վերաբերյալ տեխնիկական ակտի ներկայացում պատվիրատուին, ընդ որում՝ սարքավորումների վերանորոգման ժամկետը չպետք է գերազանցի 5 աշխատանքային օրը՝ սկսած անսարքությունների վերաբերյալ տեխնիկական ակտի ստորագրման օրվանից:

- Եթե ախտորոշման ժամանակ պարզվում է, որ անսարք դետալը հազվադեպ օգտագործվող է և այն պետք է ձեռք բերել միայն արտադրող ֆիրմայից, ապա կատարողը սահմանում է վերանորոգման ժամկետ՝ համաձայնեցնելով պատվիրատուի հետ:
- Եթե ախտորոշման ժամանակ պարզվում է, որ սարքավորումը հնարավոր չէ կամ նպատակահարմար չէ (շահավետ չէ, որովհետև ծախսերն ավելին կլինեն, քան սարքավորման մնացորդային արժեքն է) վերանորոգել, ապա կատարողի կողմից համապատասխան մասնագետներից կազմված հանձնաժողովը տալիս է սարքավորման վերաբերյալ տեխնիկական եզրակացություն (ժամկետը չպետք է գերազանցի 2 շաբաթը):

**4. Ընդհանուր օգտագործման (ստանդարտ) ծրագրային փաթեթների տեղադրում և կարգավորում (ըստ անհրաժեշտության)՝**

- Օպերացիոն համակարգի (Windows-ի համապատասխան տարբերակի) տեղադրում և կարգաբերում:
- Ծրագրերի ստանդարտ փաթեթների տեղադրում (MS Office, Acrobat Reader, KDWin, Fonts arm/rus և այլն) և կարգաբերում:
- Նոր աշխատատեղերի ստեղծում և սպասարկում:
- Ինտերնետ հասանելիության ապահովում:

**5. Համակարգչային սարքավորումների պրոֆիլակտիկա՝**

- Համակարգչային սարքավորումների աշխատունակության ստուգում և պրոֆիլակտիկ ախտորոշում:
- Համակարգչային սարքավորումների մաքրում, փոշեհեռացում:
- Կոշտ սկավառակների (HDD) ախտորոշում, պրոֆիլակտիկա և, հնարավորության դեպքում, տեղեկատվության վերականգնում (ըստ անհրաժեշտության):
- Կոշտ սկավառակների (HDD) ցածր մակարդակի ֆորմատավորում:

Պրոֆիլակտիկ սպասարկումն իրականացվում է առնվազն 3-ամսյա պարբերականությամբ:

**6. Սարքավորումների և ծրագրային փաթեթների օգտագործման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում, այդ թվում՝**

- Համակարգչային և օժանդակ սարքավորումների (տպիչ, պատճենահանման սարք, սկաներ և այլն) օգտագործման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:
- Ծրագրերի ստանդարտ փաթեթների (MS Office, Acrobat Reader, KDWin, Fonts arm/rus) վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:
- Սպասարկվող տեղեկատվական համակարգերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում:

**7. Աշխատանքների իրականացումը և ընդունումը**

Աշխատանքները համակարգելու և իրականացնելու նպատակով ծառայություններ մատուցող կազմակերպությունը նշանակում է մշտական ներկայացուցիչ՝ ադմինիստրատոր:

Համակարգչային սարքավորումների (այդ թվում՝ նաև ցանցային) վերանորոգման կամ սպասարկման հայտերը կատարողին է ներկայացնում համապատասխան ստորաբաժանման ղեկավարը՝ պատվիրատուի լիազորված ներկայացուցչի վավերացմամբ:

Կատարողի կողմից հայտը ընդունում է պատասխանատու մասնագետը:

Աշխատանքների ավարտից հետո Կատարողը համապատասխան ստորաբաժանման ղեկավարին վավերացման է ներկայացնում աշխատանքների կատարման ակտը: Ստորաբաժանման ղեկավարը ակտը վավերացնելուց հետո հանձնում է կատարողի մշտական ներկայացուցչին:

Հաշվողական տեխնիկայի (համակարգիչների) նորոգման, տեխնիկական սպասարկման ծառայություններն իրականացվում են ՀՀ ԱՍՀՆ ստորաբաժանումների կողմից զբաղեցրած տարածքում, տեխնիկական անհրաժեշտության դեպքում, նշված աշխատանքներն իրականացվում են ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից զբաղեցրած տարածքում:

Համակարգչային սարքավորումների (այդ թվում՝ նաև ցանցային) վերանորոգման կամ սպասարկման բանավոր հայտերն ընդունվում են Օժանդակման կենտրոնի կողմից, որտեղ դրանք մշակվում, ֆիլտրվում, տեսակավորվում և ուղղորդվում են համապատասխան մասնագետներին:

**III. ՀՀ ԱՍՀՆ և նրա կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, ՍԱՊԾ և նրա տարածքային բաժինների, ՀՀ մարզպետարանների, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների ՄԾՏՄ-ների միջև լոկալ և գլոբալ ցանցի սպասարկում, սերվերային համալիրի և առանձնացված սերվերների սպասարկում**

Ծառայություններ մատուցող կազմակերպությունը սույն տեխնիկական բնութագրի III բաղկացուցիչ մասով նախատեսված աշխատանքների շրջանակներում պետք է իրականացնի ՀՀ ԱՍՀՆ և նրա կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, ՍԱՊԾ և նրա տարածքային բաժինների, ՀՀ մարզպետարանների, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների ՄԾՏՄ-ների (տես՝ II բաղկացուցիչ մասի ա)-ից ե) ենթակետերը) միջև լոկալ և գլոբալ ցանցի սպասարկում, սերվերային համալիրի և առանձնացված սերվերների սպասարկում, այդ թվում՝

1. **Լոկալ տեղեկատվական ցանցի սպասարկում, այդ թվում՝**

- Համակարգչային ցանցի ակտիվ սարքավորումների կարգաբերում, սպասարկում, մոնիթորինգ:
- Սերվերային համալիրի և առանձնացված սերվերների աշխատանքի ամենօրյա վերահսկողություն:
- Սերվերային համալիրում և առանձնացված սերվերներում առկա տեղեկատվության գաղտնիության ապահովում:
- Սերվերային սարքավորումների աշխատունակության ստուգում և պրոֆիլակտիկ ախտորոշում:
- Սերվերային համալիրում և առանձնացված սերվերներում առկա տեղեկատվության արխիվացում:
- Սերվերային համալիրում հայտնաբերված անսարքությունների և խափանումների վերհանում, շտկում, վերանորոգում:
- Սերվերային համալիրի արտադրողականության վերահսկում, անհրաժեշտության դեպքում, վիրտուալ սերվերների հաշվողական ունակությունների ավելացում:
- Սերվերների ցանցային անվտանգության, ինչպես նաև հակավիրուսային պաշտպանության ապահովում:
- Ցանցային երթուղիչների կարգաբերում, տեղադրում և դրանց սպասարկում:
- Ժապավենային արխիվացման սարքերի տեղադրում, կարգաբերում, արխիվների վարում:

ՍԱՊԾ-ում տեղակայված է ևս մեկ սերվերային համալիր, որը հանդիսանում է «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ում տեղակայված սերվերային համալիրի

կրկնօրինակը, որի մասնակի սպասարկումն իրականացվում է ՍԱՊԾ տեխնիկական անձնակազմի կողմից:

**2. Տեղեկատվական համակարգերի տեղակայում, շտեմարանների արխիվացում և սպասարկում, այդ թվում՝**

- Տեղեկատվական համակարգերի տեղակայում:
- Տեղեկատվական համակարգերի տվյալների շտեմարանների արխիվացում և արխիվների վարում:
- Տեղեկատվական համակարգերի սպասարկում:
- Տեղեկատվության գաղտնիության ապահովում:
- Տեղեկատվական համակարգերի անվտանգությունն ապահովող միջոցառումների իրականացում:
- Տեղեկատվական ենթահամակարգերի հետ աշխատող անձնակազմին մեթոդական աջակցության տրամադրում Օժանդակման կենտրոնի միջոցով, հրահանգավորում, ուսուցում/վերապատրաստում:

**IV. ՀՀ ԱՍՀՆ և նրա կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, ՍԱՊԾ և նրա տարածքային բաժինների, ՀՀ մարզպետարանների, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների ՍԾՏՄ-ների ինտերնետ հասանելիության ապահովում և սոցիալական պաշտպանության ոլորտում գործող վեբկայքերի սպասարկում**

Ծառայություններ մատուցող կազմակերպությունը սույն տեխնիկական բնութագրի IV բաղկացուցիչ մասով նախատեսված աշխատանքների շրջանակներում պետք է իրականացնի ՀՀ ԱՍՀՆ և նրա կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների, ՍԱՊԾ և նրա տարածքային բաժինների, ՀՀ մարզպետարանների, Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների ՍԾՏՄ-ների (տես՝ II բաղկացուցիչ մասի ա)-ից ե) ենթակետերը) ինտերնետ հասանելիության ապահովումը, այդ թվում՝

- Էլեկտրոնային փոստի հասցեների տրամադրում և սպասարկում:
- Ինտերնետ ցանցից օգտվելու հնարավորությունների բաշխում ըստ ստորաբաժանումների և մասնագետների աշխատանքային պարտականությունների փաստացի կարիքների:
- Ստորաբաժանումների կողմից ինտերնետից օգտվելու վերաբերյալ վերլուծությունների ստացում և տրամադրում:
- Ըստ անհրաժեշտության, այլընտրանքային կապի ապահովում:

Սույն տեխնիկական բնութագրի IV բաղկացուցիչ մասով նախատեսված են նաև սոցիալական պաշտպանության ոլորտում գործող վեբկայքերի սպասարկման աշխատանքները, մասնավորապես.

- ՀՀ ԱՍՀՆ պաշտոնական վեբկայք՝ www.mlsa.am
- ԶՊԳ պաշտոնական վեբկայք՝ www.employment.am
- ԲՍՓԳ պաշտոնական վեբկայք՝ www.hhbsp.am
- Հաշմանդամության ոլորտի վեբկայք՝ www.disabilityarmenia.am
- Կենսաթոշակային պորտալ՝ www.epension.am
- 114 Թեժ-գիծ ծառայության վեբկայք՝ www.114gov.am:

Վեբկայքերի սպասարկման աշխատանքներն իրենց մեջ ներառում են հետևյալ միջոցառումները.

1. Վեբկայքերի բովանդակության և կառուցվածքի ծրագրային վերահսկողություն՝

- փոփոխությունների կառավարում,
- տարբերակների կառավարում,
- որակի կառավարում,
- առաջացած թերությունների վերացում:

2. Վեբկայքերի շահագործման ուղեկցում՝
   - շահագործման աջակցություն,
   - շահագործման համար անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում:
3. Վեբկայքերի բովանդակության պարբերաբար տեղադրում և թարմացում (բացառությամբ՝ www.employment.am, www.disabilityarmenia.am վեբկայքերի):
4. Բովանդակային պատասխանատուի պահանջով, նոր բաժինների և ենթաբաժինների ավելացում՝ համապատասխան ծրագրային փոփոխություններով:
5. Վեբկայքերի վերոնշյալ մոդուլների աշխատանքի, անվտանգության և արդիականության ապահովում:
6. Վեբկայքերի տեղեկատվական շտեմարանի էլեկտրոնային արխիվի վարում և պահպանում:
7. Տեղեկատվության անվտանգության ապահովում:
8. Վեբկայքերի սերվերի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովում՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության ներկայացրած պահանջների պահպանմամբ:
9. Վեբկայքերի շահագործման համար անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում ՀՀ ԱՍՀՆ համապատասխան ստորաբաժանումներին:
10. www.tundarc.am վեբկայքում բովանդակության տեղադրում՝ ըստ ՀՀ ԱՍՀՆ համապատասխան ստորաբաժանումների պատասխանատուների կողմից ներկայացված տեղեկատվության:

**Ծառայությունների մատուցման ժամկետ՝ 2017 թվականի հունվարի 9-ից դեկտեմբերի 30-ը ներառյալ:**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն-3
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հ/Հ 900011262020
ՀՎՀՀ 01506515
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝

_____________ Ա. Գրիգորյան

Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
ք. Երևան, Կ.Ուլնեցու - 68
Բանկի անվանումը՝ Հայէկոնոմբանկ ՓԲԸ Ձեյթուն մասնաճյուղ
Հ/Հ 16351801254 3
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն _____________ Ա. Արքայանյան

Կ. Տ.

Հավելված N 2
«07» 02 2017թ. կնքված
N ԱՍՀՆ-ԲԸԱՀ-17/1 գնման պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ հազ. դրամ

| Ծառայության անվանումը | բյուջետային դասակարգման հոդվածը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝ | | | | | | | | | | | | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| **Մասնագիտական ծառայություններ** | 4241 | | 26200.0 | 53558.1 | 78600.0 | 104800.0 | 131660.0 | 166401.9 | 201143.7 | 235885.6 | 261937.6 | 287989.6 | 314044.3 | 314044.3 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն-3
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն
Հ/Հ 900011262020
ՀՎՀՀ 01506515
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝

Ա. Գրիգորյան
ստորագրություն

Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ
ք. Երևան, Կ.Ուլնեցու - 68
Բանկի անվանումը՝ Հայէկոնոմբանկ ՓԲԸ Զեյթուն մասնաճյուղ
Հ/Հ 16351801254 3
ՀՎՀՀ 02602449

Գործադիր տնօրեն Արրահամյան
ստորագրություն

Կ. Տ.

*Հավելված 3*
*«____» ____________20 թ. կնքված*
*N ____________________ ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
______________________________
հվհհ _________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ___________________________
______________________________
հվհհ_________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» ____________20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________
______________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________________________________________________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս________________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«____» ____________20 թ. կնքված*
*N __________________ ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N
## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____________________ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
_________________ -ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____________
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ________ ____ -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*22 սեպտեմբերի 2010 թվականի*
*թիվ 247-Ա, քաղաք Երևան*

## ««ՆՈՐՔ» ՏԵՂԵԿԱՏՎԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՄԵՆԱՇՆՈՐՀ ԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ««Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) ներկայացուցչի մասնակցությամբ, 2010 թվականի սեպտեմբերի 22-ի դռնբաց նիստում քննարկեց Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Նախարարություն) գրության հիման վրա Ընկերությանը մի շարք ապրանքային շուկաներում մենաշնորհի դիրք ունեցող համարելու վերաբերյալ հարցը:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

Հանձնաժողովի 2005 թվականի հունիսի 1-ի ««Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը գերիշխող դիրք ունեցող համարելու մասին» թիվ 55-Ա որոշմամբ Ընկերությունը «Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում հաշմանդամների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում», «Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում ընտանեկան նպաստի տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում», «Զբաղվածության ծառայությունների ծրագրի շրջանակներում իրականացվող գործազուրկների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների՝ «Գործ» համակարգի ձեռքբերում» ապրանքային շուկաներում 2004 թվականի տվյալներով համարվել է գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից) և գրանցվել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում):

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԱԳԳ /ԷԳ.1/ 3397-10 գրությամբ ներկայացված տեղեկատվության համաձայն սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ոլորտում Ընկերությունը սուբսիդիայի պայմանագրով 2004 թվականից սկսած յուրաքանչյուր տարի մատուցում է [redacted]

[redacted] այդ թվում նաև տեղեկանքներից հրաժարված քաղաքացիների բազայի վարում, սպասարկում և տեղեկատվության տրամադրում, ինքնաշխատ տեղեկատվական բազաներում կիրառվող քաղաքացիների սոցիալական ապահովության քարտերի համարների հավաստիության ճշտման ու տվյալների փոխոխությունն ապահովող համակարգի վարում, սպասարկում և տեղեկատվության տրամադրում: Ընկերության կողմից կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է 146 539,7 հազար դրամ:

Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ոլորտում Ընկերությունը սուբսիդիայի պայմանագրով 2007 թվականից սկսած յուրաքանչյուր տարի իրականացնում է՝ երեխաների ծննդյան միանվագ և մինչև երկու տարեկան երեխաների խնամքի նպաստների տեղեկատվական համակարգի միջոցով «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և օրենսդրական այլ ակտերով սահմանված կարգով նպաստ ստանալու համար սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային գործակալություններ դիմած անձանց, նրանց երեխաների հաշվառումը, նպաստի իրավունքի ամրագրումը, վճարման ցուցակների տպագրությունը: Ընկերության կողմից կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է 9 454,9 հազար դրամ:

Դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ոլորտում Ընկերությունը սուբսիդիայի պայմանագրով 2006 թվականից սկսած յուրաքանչյուր տարի իրականացնում է դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի մանկատներում խնամվող երեխաների, որդեգրումների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական տվյալների հաշվառում, որը ձևավորվում է մանկատների, իսկ որդեգրումների դեպքում համապատասխան լիազորված մարմիններից, մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններից ստացվող տեղեկատվության հիման վրա: Ընկերության կողմից կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է 15 234,7 հազար դրամ:

[redacted] Ընկերությունը սուբսիդիայի պայմանագրով 2006 թվականից սկսած յուրաքանչյուր տարի իրականացնում է՝ ՎՏԲ բանկում նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ԽՍՀՄ հանրապետական բանկի ավանդատուների ավանդների փոխհատուցման

(այսուհետ՝ ավանդի փոխհատուցման) տեղեկատվական համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 16-ի «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ԽՍՀՄ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հուլիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 352-Ն որոշմամբ սահմանված կարգով ավանդի փոխհատուցման համար սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ դիմած քաղաքացիների հաշվառումը, ավանդի փոխհատուցման իրավունքի, չափի, ինչպես նաև դրանց տպագրությունը և վճարումից հետո տվյալների ամփոփումը։ Ընկերության կողմից կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների աշխատանքների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է 14 634,7 հազար դրամ։

[redacted] Ընկերությունը սուբսիդիայի պայմանագրով 2009 թվականին իրականացրել է տեղեկատվական համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից սոցիալական ոլորտում բարեգործական որակված ծրագրերի և նրանց շահառուների հաշվառում, որոնց հիման վրա իրականացվում են վերլուծություններ, հաշվետվություններ, բարեգործական ծրագրերի շրջանակներում աջակցությունից օգտվողների հաշվառում, քաղաքացիների անհատական տվյալների մուտքագրում համակարգ, որոնք կիրառվում են ոլորտում քաղաքականության մշակման գործընթացում։ Ընկերության կողմից կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների աշխատանքների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է 5 220,2 հազար դրամ։

[redacted] Ընկերությունը սուբսիդիայի պայմանագրով 2009 թվականին իրականացրել է՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի պետական տեսչության գործունեության իրականացման համար խիստ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, դրա հիման վրա հաշվետվություններ և վերլուծություններ, տեղեկատվական համակարգի ստեղծում, որի շահագործումը օժանդակում է աշխատանքի պետական տեսչության կողմից իրականացվող գործողությունների արդյունավետ կազմակերպմանը։ Ընկերության կողմից կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների ծավալը 2009 թվականի ընթացքում կազմել է 5 658,0 հազար դրամ։

Վերոնշյալ ոլորտների աշխատանքների և ծառայությունների համատեղ և միաժամանակյա իրականացումը մեկ տնտեսվարող սուբյեկտի կողմից հնարավորություն է տալիս ապահովել սոցիալական ոլորտում պետական միասնական համակարգ, որի պատվիրատուն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը։ Յուրաքանչյուր ոլորտ խիստ տարբեր է և կազմակերպվում է ինքնուրույն, կատարվող աշխատանքները զգալիորեն նպաստում են սոցիալական ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունավետության բարձրացմանը։

Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԱԳԳ /ԷԳ.1/ 3397-10 գրության համաձայն [redacted]

Փաստորեն «Սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները, իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, «Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները, իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, «Դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ԽՍՀՄ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ԽՍՀՄ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, «Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները, իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը, «Հայաստանի Հանրապետության աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման է հանդիսանում Հայաստանի Հանրապետության

աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները, իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

Համաձայն «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է մենաշնորհի դիրք ունեցող, եթե որպես իրացնող (ձեռքբերող) չունի մրցակից: Հետևաբար, [redacted]ն:

Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում) գրանցվում, ինչպես նաև այդ դիրքը կորցնելու դեպքում՝ գրանցումից հանվում է Հանձնաժողովի որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 6-րդ մասը, 19-րդ հոդվածի առաջին մասի «ա» և «թ» կետերը, Հանձնաժողովը՝

որոշում է

1. [redacted], սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

2. [redacted] համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

3. [redacted] տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

4. [redacted] 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և

տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ԽՍՀՄ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ի ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

5. [redacted] վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

6. [redacted] տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահման ճանաչել Հայաստանի Հանրապետության աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ոլորտում իրականացվող աշխատանքները (ծառայությունները), իսկ աշխարհագրական սահման՝ Հայաստանի Հանրապետության տարածքը:

7. [redacted] ընկերությանը «Սոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ», «Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ», «Դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ», «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ», «Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» և «Հայաստանի Հանրապետության աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» [redacted]

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում դրա պատճենը ««Նորք» տեղեկատվատեխնոլոգիական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

9. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել

դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԱՔՈՅԱՆ